ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 8 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ.Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 17-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 25.08.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. հունիսի 17-ին՝ Երեւանում: Համաձայնագիրը բաղկացած է ներածությունից եւ 11 հոդվածներից:

2. Համաձայնագրի նպատակն է բարենպաստ պայմաններ ստեղծել մի Պայմանավորվող կողմի ներդրողների՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ներդրումներ կատարելու համար՝ ինքնիշխան հավասարության եւ փոխշահավետության հիման վրա:

Համաձայնագրով տրամադրվում են երաշխիքներ՝

- կողմերի ներդրողների ներդրումների նկատմամբ արդար եւ հավասար վերաբերմունք ապահովելու,
- կողմերից յուրաքանչյուրի ներդրողների ներդրումների օտարման դեպքում ներդրողների իրավունքների պաշտպանությունն ու կորուստների փոխհատուցումն ապահովելու,
- կողմերի ներդրողների ներդրումներից ստացվող եկամուտների՝ կապիտալի ծագման երկիր, կամ այլ երկրներ ազատ փոխանցումն ապահովելու նպատակով:

3. Համաձայնագրով սահմանված են կողմերի եւ ներդրողների միջեւ վեճերի, համաձայնագրի մեկնաբանմանը եւ կիրառմանը վերաբերող վեճերի կարգավորման, ինչպես նաեւ համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, համաձայնագրի ուժի մեջ մտնելու, տեւողության եւ դադարեցման կարգերը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- խրախուսել եւ ստեղծել մյուս կողմի ներդրողների համար ներդրումներ կատարելու բարենպաստ պայմաններ,
- մյուս կողմի ներդրողների նկատմամբ ցուցաբերել արդար եւ հավասար վերաբերմունք, ապահովել ներդրումների պատշաճ պաշտպանություն եւ ապահովություն՝ համաձայն ազգային օրենքների եւ կանոնակարգերի,

- հատուկ ուշադրություն դարձնել, որպեսզի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները ՀՀ տարածքում չենթարկվեն օտարման, սեփականազրկման կամ ազգայնացման: Դա կարող է տեղի ունենալ հասարակության եւ պետության կարիքների համար միայն բացառիկ դեպքերում, օրենքով սահմանված կարգով, անխտրականության հիման վրա եւ համարժեք փոխհատուցմամբ, որը պետք է վճարվի օտարման միջոցներ ձեռնարկող՝ ընդունող երկրի սահմանադրության եւ օրենքների համաձայն,
- ապահովել Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների, համաձայնագրի ցանկով սահմանված միջոցների՝ առանց ուշացման փոխանցումներն օրենքների եւ կանոնակարգերի շրջանակներում,
- ձեռնարկել միջոցներ, որպեսզի Պայմանավորվող կողմի ներդրողի ՀՀ տարածքում կատարած ներդրման հետ կապված ցանկացած վեճ կարգավորվի բարեկամաբար, խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով: Համաձայնության չհասնելու դեպքում մասնակից յուրաքանչյուր կողմ պետք է իրավունք ունենա վեճը ներկայացնելու ներդրումն ընդունող Պայմանավորվող կողմի իրավասու դատարան,
- ապահովել, որ համաձայնագրի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող ցանկացած վեճ կարգավորվի դիվանագիտական ուղիներով կատարվող խորհրդակցությունների միջոցով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2009 թվականի հունիսի 17-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 սեպտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ-824